ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ջրծաղիկի պատվաստանյութ

## *Ինչ պետք է իմանաք*

Պատվաստման մասին տեղեկատվական հայտարարություններից շատերը հասանելի են իսպաներեն և այլ լեզուներով: Տե ս www.immunize.org/vis

Hojas de información Sobre Vacunas están disponibles en español y en muchos otros idiomas. Visite www.immunize.org/vis

## 1 Ինչու՞ պատվաստում ստանալ

Ջրծաղիկը (որը նաև անվանում են «վարիցելա») տարածված մանկական հիվանդություն է: Այն սովորաբար ընթանում է մեղմ, սակայն կարող է նաև լինել լուրջ՝ մանավանդ նորածինների և մեծահասակների մոտ:

- Այն առաջացնում է ցան, քոր, տենդ և հոգնածություն:
- Այն կարող է հանգեցնել մաշկի ծանր վարակների, սպիների, թոքաբորբի, ուղեղի վնասվածքների կամ մահվան:
- Ջրծաղիկի վիրուսը կարող է փոխանցվել մարդուց մարդ՝ օդակաթիլային կամ ջրծաղիկի պատճառով առաջացած բշտիկներից հեղուկին դիպչելու ճանապարհով:
- Ջրծաղիկ տարածների մոտ տարիներ անց կարող է առաջանալ ցավոտ ցան, որն ստացել է «գոտեորքին» անվանումը:
- Պատվաստանյութի մշակումից առաջ Միացյալ Նահանգներում ամեն տարի մոտ 11 000 մարդ ջրծաղիկի պատճառով հոսպիտալացվում էր:
- Պատվաստանյութի մշակումից առաջ Միացյալ Նահանգներում ամեն տարի ջրծաղիկից մահանում էր մոտ 100 մարդ:

Ջրծաղիկի պատվաստանյութը կարող է կանխարգելել հիվանդությունը:

Ջրծաղիկի դեմ պատվաստում ստացած մարդկանց մեծամասնությունը ջրծաղիկով չի հիվանդանում: Սակայն, եթե ջրծաղիկի դեմ պատվաստում ստացած մարդը հիվանդանա ջրծաղիկով, ապա հիվանդության ընթացքը մեղմ կլինի: Այս մարդկանց մոտ այդքան շատ բշտիկ չի առաջանում, նրանց մոտ ավելի հազվադեպ է բարձրանում ջերմությունը, նրանք ավելի արագ են ապաքինվում:

## 2 Ո՞վ պետք է ստանա ջրծաղիկի դեմ պատվաստում և ե՞րբ

**Պլանային պատվաստում**

Այն երեխաները, որոնք երբեք ջրծաղիկ չեն տարել, պետք է ստանան պատվաստման 2 դեղաչափ հետևյալ տարիքներում.

| | |
|---|---|
| 1-ին դեղաչափը՝ | 12–15 ամսեկանում |
| 2-րդ դեղաչափը՝ | 4–ից 6 տարեկանում (կարելի է պատվաստել ավելի շուտ 1-ին դեղաչափից առնվազն 3 ամիս անց) |

13 տարեկան և ավելի մեծ տարիքի անձինք (ովքեր ջրծաղիկ երբեք չեն տարել կամ երբեք պատվաստված չեն եղել ջրծաղիկի դեմ) պետք է ստանան երկու դեղաչափ՝ առնվազն 28 օր տարբերությամբ:

**Բաց թողած պատվաստումները լրացնելը**

Այն անձինք, ովքեր լրիվ պատվաստում չեն ստացել և երբեք ջրծաղիկ չեն տարել, պետք է ստանան ջրծաղիկի դեմ պատվաստման մեկ կամ երկու դեղաչափ: Պատվաստումները ստանալու ժամանակը կախված է տարիքից: Դիմեք Ձեր բժշկին:

Ջրծաղիկի դեմ պատվաստանյութը կարող է ներարկվել այլ պատվաստանյութերի հետ մեկտեղ:

Ծանոթագրություն. 12 տարեկան և ավելի ցածր տարիքի անձանց երկու առանձին պատվաստանյութ տալու փոխարեն կարող է ներարկվել «համակցված» **MMRV** անվանումը կրող պատվաստանյութ, որը պարունակում է ինչպես ջրծաղիկի, այնպես էլ ԿԿԽ՝ կարմրուկի, կարմրախտի և խոզուկի դեմ պատվաստանյութեր:

## 3 Որոշ անձանց հակացուցված է ջրծաղիկի դեմ պատվաստում ստանալ կամ նրանք պետք է որոշ ժամանակ սպասեն

- Ջրծաղիկի դեմ պատվաստանյութ չի կարելի սրսկել այն անձանց, ովքեր երբևէ ունեցել են կյանքին վտանգ սպառնացող ալերգիկ հակազդեցություն՝ ջրծաղիկի պատվաստանյութի նախկինում տրված դեղաչափի, ինչպես նաև ժելատինի կամ նեոմիցին հակաբիոտիկի հանդեպ:
- Ծրագրված պատվաստման ժամանակ միջին կամ ծանր հիվանդ մարդկանց ջրծաղիկի դեմ պատվաստանյութը սովորաբար խորհուրդ է տրվում ներարկել ապաքինվելուց հետո:
- Հղի կանայք ջրծաղիկի դեմ պատվաստանյութ կարող են ստանալ ծննդաբերությունից հետո: Կանայք պետք է խուսափեն հղիանալուց ջրծաղիկի դեմ պատվաստումից հետո մոտ 1 ամսվա ընթացքում:
- Որոշ անձինք պետք է դիմեն իրենց բժշկին՝ ճշտելու համար, թե արդյոք նրանք պետք է ստանան ջրծաղիկի դեմ պատվաստանյութ: Այդ անձանցից են՝
  - ՄԻԱՎ/ՁԻԱՀ կամ իմունային համակարգի վրա ազդող այլ հիվանդություն ունեցողները
  - Իմունային համակարգի վրա ազդեցություն գործող դեղամիջոցներով, օրինակ՝ ստերոիդներով, 2 շաբաթից ավելի բուժում ստացողները
  - Որևէ տեսակի քաղցկեղ ունեցողները
  - Քաղցկեղի դեմ ճառագայթմամբ կամ դեղամիջոցներով բուժում ստացողները
- Արյան փոխներարկում կամ արյան այլ բաղադրամասեր ստացած անձինք պետք է դիմեն իրենց բժշկին և ճշտեն, թե նրանք երբ կարող են ջրծաղիկի դեմ պատվաստում ստանալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր բժշկին:

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

## 4 Որո՞նք են ջրծաղիկի դեմ պատվաստման վտանգները

Պատվաստումը, ինչպես ցանկացած դեղամիջոց, կարող է լուրջ խնդիրներ առաջացնել, օրինակ՝ ուժեղ ալերգիկ հակազդեցություններ: Ջրծաղիկի դեմ պատվաստման լուրջ ժսասներ առաջացնելու կամ մահվան պատճառ դառնալու վտանգը չափազանց ցածր է:

Ջրծաղիկի դեմ պատվաստում ստանալը շատ ավելի ապահով է, քան ջրծաղիկով հիվանդանալը: Ջրծաղիկի դեմ պատվաստում ստացած մարդկանց մոտ սովորաբար ոչ մի խնդիր չի առաջանում: Հակազդեցությունների հավանականությունը սովորաբար ավելի բարձր է առաջին, այլ ոչ թե երկրորդ դեղաչափն ստանալուց հետո:

**Թույլ արտահայտված ախտանիշներ**
- Ցավ կամ այտուցվածություն սրսկման տեղում (5-ից մոտ 1 երեխայի և 3-ից մոտ 1 երիտասարդի կամ մեծահասակի մոտ)
- Տենդ (10-ից 1 կամ պակաս մարդու մոտ)
- Թույլ ցան՝ պատվաստումից ստանալուց մոտ մեկ ամսվա ընթացքում (25-ից մոտավորապես 1 մարդու մոտ): Հնարավոր է, որ այս ախտանիշներն ունեցող մարդիկ վարակեն իրենց ընտանիքի անդամներին, սակայն նման դեպքերը շատ հազվադեպ են:

**Միջին բարդության ախտանիշներ**
- Տենդից առաջացող նոպաներ (ցնցումներ և աչքերի լայն բացվածություն), (շատ հազվադեպ):

**Ծանր ախտանիշներ**
- Թոքաբորբ (շատ հազվադեպ)

Ջրծաղիկի դեմ պատվաստում ստացած անձանց մոտ նկատվել են նաև այլ լուրջ ախտանիշներ, ներառյալ գլխուղեղի ծանր հակազդեցություններ և արյան ցածր պարունակություն: Սրանք այնքան հազվադեպ են, որ մասնագետները չեն կարող հաստատել, թե արդյոք դրանք առաջացել են պատվաստման հետևանքով, թե ոչ: Եթե նույնիսկ առաջանան, ապա չափազանց հազվադեպ դեպքերում:

Ծանոթագրություն. **MMRV** պատվաստանյութի առաջին դեղաչափը կապված է եղել ցանի և ավելի ուժեղ տենդի հետ, քան առանձին տրված MMR և ջրծաղիկի պատվաստանյութերը: Ցան է հայտնաբերվել 20-ից մոտավորապես 1 մարդու, իսկ տենդը՝ 5-ից մոտ 1 մարդու մոտ:

Տենդով առաջացված ուշաթափությունները MMRV-ից հետո նույնպես տեղի են ունեցել ավելի հաճախ: Դրանք նույնպես տեղի են ունենում առաջին դեղաչափից հետո՝ 5–ից 12 օրվա ընթացքում:

## 5 Ի՞նչ անել, եթե ուժեղ հակազդեցություն է առաջացել

**Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնել**
- Ուշադրություն դարձրեք մտահոգություն առաջացնող որևէ վիճակների, օրինակ՝ ալերգիկ ծանր հակազդեցությունների նշաններին, շատ բարձր ջերմության կամ անսովոր վարքին:
  Ծանր ալերգիկ հակազդեցության նշաններից են ցանը, դեմքի և կոկորդի այտուցվածությունը, շնչառության դժվարացումը, սրտի արագ զարկերը, գլխապտույտը և թուլությունը: Դրանք սովորաբար արտահայտվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

**Ի՞նչ պետք է անել**
- Եթե կարծում եք, որ առաջացել է ալերգիկ ծանր հակազդեցություն կամ մեկ այլ անհետաձգելի իրավիճակ, զանգահարեք 9-1-1 կամ հիվանդին տարեք մոտակա հիվանդանոց: Այլապես զանգահարեք Ձեր բժշկին:
- Հակազդեցության մասին այդուհանդերձ պետք է հայտնել Պատվաստման բացասական ազդեցությունների դեպքերի հաղորդման համակարգ (VAERS): Այդ մասին կարող է հաղորդել Ձեր բժիշկը կամ Դուք ինքներդ կարող եք հաղորդել VAERS կայքի **www.vaers.hhs.gov** միջոցով կամ զանգահարելով **1-800-822-7967** հեռախոսահամարով:

*VAERS-ը միայն հակազդեցությունների մասին հաղորդելու համար է: Այն բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:*

## 6 Պատվաստումից ժսասվելու փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստումներից ժսասվելու փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որն ստեղծվել է փոխհատուցում տրամադրելու համար այն մարդկանց, ովքեր ժսասվածքներ են ստացել որոշ պատվաստանյութերի պատճառով:

Այն անձինք, ովքեր կարծում են, որ ժսասվածք են ստացել պատվաստման հետևանքով, կարող են տեղեկանալ այս ծրագրի, ինչպես նաև բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** հեռախոսահամարով կամ այցելելով VICP-ի կայք՝ **www.hrsa.gov/vaccinecompensation** հասցեով:

## 7 Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ տեղեկություններ ստանալ

- Դիմեք Ձեր բժշկին: 1–888–767–4687
- Զանգահարեք Ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Դիմեք Հիվանդությունների հսկողության և կանխման կենտրոն(CDC).զանգահարեք **1-800-232-4636** (**1-800-CDC-INFO**) կամ
  - այցելեք CDC-ի կայք՝ **www.cdc.gov/vaccines**

DCH–0451A
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

Translation provided by the Immunization Action Coalition

Vaccine Information Statement (Interim)
# Varicella Vaccine

3/13/2008 Armenian

42 U.S.C. § 300aa-26

Office Use Only

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: